ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ

ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

գ. Լոռի Բերդ **« 10 » սեպտեմբերի 2025թ.**

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն ԹԻՎ 8

ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Կայացավ ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. սեպտեմբերի 10-ին, ժամը՝ 12:00-ին հրավիրված յոթերորդ նստաշրջանի հերթական նիստը:

Նիստը ուղիղ հեռարձակվում է համայնքապետարանի պաշտոնական յութուբյան ալիքով և ֆեյսբուքյան էջով:

Նիստին ներկա էին Լոռի Բերդ համայնքի ավագանու տասներեք անդամները, բացակա էին՝ Կարլեն Վերմիշյանը և Վանո Չատինյանը:

Նիստը վարեց՝ Լոռի Բերդ համայնքի ղեկավար՝ Արայիկ Ներսիսյանը:

Նիստը արձանագրեց՝ Լոռի Բերդի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Անի Մարտիրոսյանը:

Համայնքի ղեկավար Արայիկ Ներսիսյանը ներկայացրեց նիստի օրակարգը, որտեղ տեղ էին գտել հետևյալ հարցերը.

Լսեցին՝

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Արայիկ Ներսիսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով և 14-րդ հոդվածի 6-րդ կետով, 16-րդ հոդվածի 5-րդ մասով՝

Ավագանին որոշեց՝ հաստատել ՀՀ Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025թ. յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ սեպտեմբերի 10-ի նիստի օրակարգը՝ համաձայն ստորև ներկայացված տեսքի.

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 10-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳ

1) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու 2025 թվականի յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի՝ սեպտեմբերի 10-ի նիստի օրակարգը հաստատելու մասին:

2) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի հանրակրթական դպրոցների գերազանցիկներին և առաջին դասարանցիներին Լոռի Բերդ համայնքի բյուջեից գումար տրամադրելու մասին:

3) ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Ստեփանավանի հրշեջ-փրկարարական ջոկատին գույք նվիրաբերելու մասին:

4) Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տալու մասին:

5) Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը և ժամը սահմանելու մասին:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 50-Ա/

Լսեցին՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐԻ ԳԵՐԱԶԱՆՑԻԿՆԵՐԻՆ ԵՎ ԱՌԱՋԻՆ ԴԱՍԱՐԱՆՑԻՆԵՐԻՆ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ 2025Թ. ԲՅՈՒՋԵԻՑ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաս-տանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, ինչպես նաև հաշվի առնելով Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

Ավագանին որոշեց՝ տալ հավանություն Լոռի Բերդ համայնքի 2025թ. բյուջեի Այլ մշակութային կազմակերպություններ»նախահաշվի 4727 հոդվածից համայնքի հանրակրթական դպրոցների 2025-2026թթ. ուսումնական տարվա առաջին դասարանցիներին և «2024-2025թթ. ուսումնական տարվա արդյունքներով բարձր առաջադիմություն ունեցող աշակերտներին՝ յուրաքանչյուրին 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ դրամական խրախուսանքներ տրամադրելու առաջարկությանը:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 51-Ա

Լսեցին՝

ՀՀ ՆԳՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՍՏԵՓԱՆԱՎԱՆԻ ՀՐՇԵՋ-ՓՐԿԱՐԱՐԱԿԱՆ ՋՈԿԱՏԻՆ ԳՈՒՅՔ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ./Մարգարիտա Հովսեփյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի18-րդ հոդվածի 1-ին մասի21-րդկետով և հիմք ընդունելովՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Ստեփանավանի հրշեջ-փրկարարական ջոկատի հրամանատարի դիմումը, ինչպես նաև Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

1. **Ավագանին որոշեց՝** ՀՀ ՆԳՆ փրկարար ծառայության Ստեփանավանի հրշեջ-փրկարարական ջոկատին նվիրաբերել 4 (չորս) հատ պատի օդորակիչ, սպլիտ 9000 BTU և օդորակիչի կախիչ՝ ընդամենը268.000 (երկու հարյուր վաթսունութհազար) դրամ արժողությամբ:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 52-Ա/

Լսեցին՝

«ՀԷՑ» ՓԲԸ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ՝ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆԸ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. /Անի Մարտիրոսյան/

Հիմք ընդունելով Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին ՀՀ օրենքի 11-րդ, 16-րդ հոդվածները և Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի նոյեմբերի 19-ի հ. 1325-Ն որոշման հավելվածի 28-րդ կետը, ինչպես նաև հաշվի առնելով ս.թ. հուլիսի 16-ին Լոռի Բերդի համայնքապետարանում կայացած հանրային լսման արդյունքները՝

Ավագանին որոշեց՝ «ՀԷՑ» ՓԲԸ ներդրումային ծրագրի շրջանակներում նախատեսվող՝ 11/35/10Կվ «Ստեփանավան» և «Տաշիր» ենթակայանների 2-րդ սնուցումների ապահովումը նոր կառուցվող 111 Կվ «Ստեփանավան 2» օդային գծով նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

Առաջարկել Լոռի Բերդ համայնքի ղեկավարին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը և լուսանկարները օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 53-Ա/

Հավելվածը կցվում է:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԼՈՌԻ ԲԵՐԴ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ԵՎ ԺԱՄԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զեկ. /Անի Մարտիրոսյան/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածով՝

Ավագանին որոշեց. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Լոռի Բերդ համայնքի ավագանու յոթերորդ նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը սահմանել՝ 2025 թվականի հոկտեմբերի 10-ը, ժամը՝ 12:00-ն:

13 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ:

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 54-Ա/

Նիստի փակում:

Ավագանու անդամներ՝

Ներսիսյան Արայիկ Մենժիկի

Վարդումյան Հայկ Վազգենի

Պապիկյան Վահրամ Ռոմիկի

Շահնազարյան Թամարա Էդիկի

Պապյան Հարութ Միշիկի

Չիբուխչյան Արման Հրաչիկի

Ներսեսյան Իրինա Վազգենի

Սիմոնյան Անահիտ Բաբկենի

Մարգարյան Սիլվա Ստեփանի

Գրիգորյան Աննա Հրայրի

Սերոբյան Անի Սամվելի

Գևորգյան Միշիկ Մարտիկի

Ասրյան Աննա Տիգրանի

Լոռի Բերդ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝

Արայիկ Ներսիսյան _____

Նիստը արձանագրեց՝ Անի Մարտիրոսյանը _____

Կ.տ.